



22. ՀԱԼԱԼԸ ԶՀԱՐՄԱՄՈՂ ԿՆԻԿԸ

Ավալ ժամանակին ըլնում ա շիլնում մի մարդ, մի կնիկ։ Սրանք շատ դառն-աղքատ, անճար են ըլնում։

Օրեն մի օրը մարդը միտք ա անում, ասում ա.— Վե կենամ, էթամ ուրիշ երկիր աշխատանքի, բալի միքանի շայի աշխատեմ, բերեմ օղլուշաղ պահեմ, ընչանք տեսանք վերջներս ի՞նչ ա ըլնում. աստոծ ողորմած ա, հալրաթ մեզ մի լիս ու ճար կանի, էրկու գոնից մի դուռը բաց կանի։

Կանշում ա կնկանը.— Ա՛յ կնիկ,— ասում ա,— ուզում եմ էթամ ուրիշ երկիր աշխատանքի. ի՞նչ կասես։

— Ի՞նչ պտի ասեմ, ա՛յ մարդ. թե գիտա՞ ձեռդ զադ կընկնի, մի բանի տեր կդառնաս, էթաս լավ կանես. յանի պարապսարապ ման գալոն ի՞նչ պտի ըլնի։

— Լա՛վ, — ասում ա, — որ էթամ՝ խոսք տա՞ լիս ես, ընչանք իմ գալը արուտ-հայով կենաս, քու հալալը շհարամես։

— Հա՛, — ասում ա կնիկը, — խոսք եմ տալի. թե քեզ մուխաննաթություն արի՝ ի՞նչ ուզում ես ա՛րա, արինս քեզ հալալ ա։

— Լա՛վ, — ասում ա մարդը, — բա՛ս որ ըտենց ա՝ կէթամ։

Հեզսի օրը ճամփի թաղարեք ա տեսնում, մի քանի ամսվա պաշար վեր ոմնում, վե կենում ընկնում ճամփա։ էթում ա, էթում ա, էթում ա, շատն ու քիչն աստոծ գիտա, է՛ս քաղաքը, է՛ն քաղա-

քը, է՛ս գեղը, է՛ն գեղը, որդի ռաստ ա գալի մնում ա, բանում, փող աշխատում, էլի վե կենում էթում իրա ճամփեն։ Ըսենց մի տարի, էրկու տարի, իրեք տարի աշխարե-աշխար, երկրե-երկիր ման ա գալի, ընչանք քիշ-միշ փող ա շինում, նոր ասում ա՝ վե կենամ, էթամ մեր երկիրը։ Վեր ա կենում գալի։ Գալիս ա գալի, շատն ու քիշն աստոծ գիտա, մի օր, էրկու օր, իրեք օր, մի շարաթ, էրկու շարաթ, իրեք շարաթ, մախասի՝ մի ամիս, հասնում ա իրանց երկրի սնուուր։ Լտե սրան մի ցելվոր ա ռաստ գալի։

— Ա՛րի, — ասում ա ինքն իրեն, — մի սրան հարցնեմ, տենամ իմ կնիկը ո՞նց ա, ո՞նց չի, իրա տված խոսքը պա՞հել ա, թե չէ։

Մոտանում ա դրան, ասում. — Բար' աջողում, ա'զպեր։

— Բարո՛վ, հա՛զար բարին, — ասում ա ցելվորը։

— Ֆլա՛ն գե՛ղիցն ես, — հարցնում ա։

— Հա՛, ֆլա՛ն գեղիցն եմ, — ասում ա ցելվորը, — Խի՛ որ։

— Թեզ մի բան եմ ուզում հարցնեմ, չեմ գիտա դրուտը կասես, թե չէ։

— Կասեմ, խի չեմ ասի, — ասում ա ցելվորը։

— Ֆլա՛ն մարդի կնկանը ճանա՞նշում ես։

— Էա՛վ, շա՛տ լավ եմ ճանաշում, է՛ն չես ասում, որ մարդը գնացել ա դարբություն՝ աշխատանքի։

— Հա՛, հենց է՛ն, Ո՞նց ա, լա՛վ ա. Հո դարտ չի՛ անում մարդի հմար։

— Ի՞նչ պտի դարտ անի, — ասում ա ցելվորը ծիծաղալոն, — ի՞նչն ա բոլ մարդը…

Մարդը էս որ լսում ա, մատը կծում ա. — Բա՛լի, — ասում ա ինքն իրան, — կա շկա, ըստե մի բան կա։

Դառը-տխուր վեր ա կենում, գալի իրանց գեղը, կնիկը մարդին տենալու բաշտան, ուրախանում, աշխարով մին ա ըլնում։ Համա մարդը որ ասես ձեն, ծատոն չի հանում. նոթերը կիտած էթում ա մի պումախում նստում։ Էս կնիկն ա՝ էն սհաթը էթում. ա լագանով ջուր բերում, մարդի ոնները լվանում, շորերը փոխում, եննա հացի թաղարեք ա տենում, որ մարդին հաց տա։ Հաց են ուտում, պրծնում, թեք են ընկնում, քնում։ Կնիկը մնում ա միտք անելոն, թե էս ի՞նչ ա պատահե իրա մարդէն, որ ըսենց նոթերը կիտել ա, որ ասես, չի խոսում։

— Հալրա՛թ, — ասում ա, — գնացել ա դարբություն, չի կարացե փող աշխատի, դարտակ վեր ա կացե, էկե՛ ընդուր ա ըստնց դառը-տիսուր, յա ո՛վ գիտա ճամփին մի փորձանք ա էկե զլովսը, չի ասում:

Մախլա՛ս՝ խեղճ կնիկը ի՛նչ անում ա, չի անում, մարդի դար-տը չի կարում իմանա:

Ըսենց անցկացավ մի քանի վախտ՝ մի օր, էրկու օր, իրեք օր, մախլասի՝ մի շաբաթ, օրեն մի օրը մարդը կնկանը խարլությու-նով տարավ գեղիցը դուս, ընդե տվեց սըպանեց, ինքը էլ եղ դա-ռավ, էկավ գեղը: Ասսու հրամանով ալրիալը էդ սըպանած կնկա տեղը ալրուր դուս քցեց: Էդ աղբուրը ընենց մի Անմահական ջուր ուներ, ընենց մի Անմահական ջուր ուներ, որ մեռելն էլ խմեր, էն սհաթը կսաղանար, ընդե կկաններ:

Ըսենց անցկացավ մի օր, էրկու օր, իրեք օր, մախլասի՝ մի շաբաթ, օրեն մի օրը մի բեղրգյան իրա մարդկերանցով անցկե-նալիս ա ընում էդ գեղի կշտովը: Հենց հասնում ա էդ կնկա սըպա-նած տեղը, մութը գետինը կոխում ա:

— Քստե վե գանք, — ասում ա, — հաց-մաց ուտենք, դինշա-նանք, գշերը մնանք, նոր էն գլխեն վե կենանք ընկնենք ճամփա:

Էդ աղբրի կշտին վեր են գալի, շագիր տալի, մնում: Որ վեր են գալի պրծնում, տենում են էդ աղբրի կշտին հրենիկ մի սպա-նած կնիկ:

Ասում են. — Հա՛լրաթ իրա մարդին մուխաննաթություն ա-րե, նա էլ սըպանել ա, բերե քցե ըստե, որ շան ու գիլի փայ ըլնի:

Բերում են կրակ անում, որ կիրակուր էփեն: Իրանք էլ կողա-գից սավայի զադ չեն ունենում: Թավով ջուր են դնում կրակի վրեն, որ մի քանի խոտոց կողագ խաշեն: Կողագը կոտորում են, ածում թալեն թե չէ, ալրիալը սաղանում ա, թավի միջիցը դուս գալի, ընկ-նում գետինը: Քոմմա մնում են զարմացած, թե էս աղբրի ջուրը ինչ զորություն պտի ունենա, որ կոտորած կողագը քցում ես մեղը՝ սա-դանում ա: Շատ են միտք անում, խելք խելքի տալի, ի՛նչ անում են շեն անում, շեն կարում իմանա:

— Ե՛կեք փորձենք, — ասում ա բեղրգյանը, — էս սըպանած կնկա վրեն էլ եղ ցրեցը շաղ տանք, տենանք կսաղանա, թե չէ:

Բերում են շաղ տալի: Շաղ տալու բաշտան էդ կնիկը սաղա-

Նում ա, վե կենում նստում, ըլնում ա ո՞նց որ մորեն մին: Քոմմա
մնում են սառած իրար էրեսի մտիկ անելոն.

— Ի՞նչ կնիկ ես,— հարցրեց բեղրդյանը,— էս ո՞նց ա էլե,
որ քեզ սըպանել են, բերե քցե ըստե:

Նո՞ր էդ կնիկը ըստե նստեց մին-մին նազլ արեց իրա գլխով
անցկացածը, ոնց որ ես ձեզ նաղլ արի:

Բեղրդյանը էս որ իմացավ, հարցրեց.— Զե՞ս զա քեզ տանեմ
շինեմ ինձ կնիկ. զաթի ես էլ աղապ, էթանք գլխներս դինչ իրար
հեննա ապրենք:

— Զէ՛, բեղրդյանը սազ ըլնի,— ասեց կնիկը,— ես մարդ ու-
նեմ, իմ հալալը շեմ հարամի:

— Զէ՛, — մըն էլ հարցրեց բեղրդյանը:

— Զէ՛, — ասեց կնիկը:

— Տէ՞ս, կփոշմանես,— ասեց բեղրդյանը:

— Զե՛մ փոշմանի,— ասեց,— դու քու աստոծ, ի՞նչ ուզում
ես՝ ա՛րաւ:

Բեղրդյանը շատ հերսոտեց էդ կնկա վրեն, նոքարներին հրա-
մայեց, մի քառասում գաղանոց ֆոր փորեն, նրան թցեն մեջը, մի
եքա քար էլ գնեն ֆորի բերնին, որ ընդիան դուս շգա: Նոքարները
մի քառասուն գաղանոց ֆոր փորեցին, խեղճ կնկանը թցեցին մե-
ջը, մի քար էլ դրին ֆորի բերնին: Առավոտը լիսը բացվեց թե չէ,
սրանք իրանց զադ-մադերը հավաքեցին, վե կացան ընկան
ճամփա:

Էդ կնիկը մնաց մեն-մենակ ֆորի միջին: Շատ ձեն տվեց, հա-
րա՛յ կանչեց, աղաշանք-պաղատանք արեց, հավարին հասնող շէ-
լավ: Անց ա կենում ըսենց մի օր, էրկու օր, իրեք օր, օրեն մի օրը
մի ուրիշ բեղրդյան ա գալի: Էդ ճամփովը անցկենում, էդ աղրոի
կշտին վեր ա գալի, շաղիր տալի մնում, որ մի քիլ դինչանա, հաց-
մաց ուտի, էլի վե կենա էթա իրա ճամփեն: Վե գալու բաշտան մի
նվոցի ձեն ա ընկնում անկաշը:

— Էս ի՞նչ նվոցի ձեն ա, — հարցնում ա բեղրդյանը նոքար-
ներին, — մի զնացե՛ք տեհեք էդ ձենը օ՞րդիան ա գալի:

Նոքարներն էթում են դե՛ս ընկնում, դե՛ն ընկնում, է՛ս դիհը
ման գալի, է՛ն դիհը ման գալի, անկազ զնում, մախլասի՞ ո՞ր շատ
ման են գալի, տենում են հրեսիկ մի քառասուն գաղանոց ֆոր,
էդ ֆորի միջիցը մի նվոց ա գալի: Ֆորի բերնի քարը եդ են քցում:

— Էդ ո՞վ ես, — հարցնում են նոքարները:

— Ասսո՞ւ սիրուն, — ձեն ա տալի կնիկը Փորիցը, — ինձ ըս-

տիան ազատեք:

Ալբիալը բերում են պարան կախ անում Փորը, կնիկը կապում ա մեջքը, քաշում են, հանում: Հանում են ի՞նչ տենում՝ մի սի՞րուն, նա՞շխուն կնիկ: Աղաք են անում դրան, բերում բեզրգյանի կուշ-տը, բեզրգյանին նաղ անում թե՛ ըսե՛նց, ըսե՛նց, ըսե՛նց բան:

— Ի՞նչ կնիկ ես, — հարցնում ա բեզրգյանը, — ըստերանք ի՞նչ ես շինում:

Կնիկը նստում ա ըստե մին յին նաղ անում իրա գլխով անցկացածը, ոնց որ ես ձեզ նաղ արի:

— Ինձ չե՞ս առնի, — հարցնում ա բեզրգյանը, — ոու ինձ կնիկ, ես քե մարդ:

— Զէ՛, բեզրգյա՞նը սաղ ըլնի, — ասում ա կնիկը, — ես մարդ ունեմ, իմ հալալը ո՞նց հարամեմ:

Էս խոսքի վրեն բեզրգյանը սրտի հերսիցը չի իմանում ի՞նչ անի: Նոքարներին հրամայում ա էդ կնկանը դնեն մի դութիկ մեջ, դութիկի բերանը կալնեն, տանեն քցեն ծովը: Նոքարները բերում են մի դութիկ շինում, դրան դնում մեջը, դութիկի բերանը դայիմ կալնում, տանում քցում ծովը, թողում գալի:

Էդ դութիկը շրի էրեսին տըմբտըմբալոն էթում ա: Էթում ա, էթում, մի օր, էրկու օր, մախլասի՛ իրեք օր, քամին քշում ա, հա-նում շրի դրաղը: Ըտե ծովի դրաղին մի թոռշի էր կենում. ինքն էր, մի պառավ մեր, էլ զադ շուներ. էրկսով էդ անվիրի-վիրի տեղը տուն ին շինե, գիլները դինչ իրանց հմար ապրում ին:

Էս թոռշին շրի էրեսին դութիկը որ տեհավ, ուրախացավ, աշ-խարով մին էլավ. հենց իմացավ միջինը փող ա, յա ապրանք, յա մի ուրիշ զադ, ասեց. — Կտանեմ, կհարստանամ, — թոռը քցեց, հանեց:

Ճըռընչալոն էդ դութիկը դրեց շալակը ու դո՞ւզ դպա տուն: Որ հասավ տոմն, բերին դութիկի բերանը բաց արին. բաց արին, ի՞նչ տենան՝ միջին մի թրջված, տըմբսկված կնիկ, որ սովածու-թյունիցը լղարե, դառել ա շոր շոփ, պինչը բռնես ֆոգին կտա:

— Փա՛ռք քեզ, աստո՞ծ, — ասեցին, — փառքդ շա՛տ ընի, հալրաթ էս էր մեր դսմաթը:

Թոռը մերը բերում ա էդ կնկանը տաք շրով շին-շին լեղաց-

նում, իրա հին շորերիցը հագնում, ենեա հացի թադարեք ա տե-
նում. մի քանի ձուկն ա խաչում, կիրակուր էփում, մախլաս՝ ի՞նչ
որ աստոծ տվել էր՝ բերում ա զնում աղաքը, որ ուսիի Խեղճ կնիկը
զաթի սոված, նխտից ընկած՝ հացը որ տեհավ, գիլի նման վրա
պրծավ հացին, Կերավ, կշտացավ, ասսուն փառք տվեց, թոռչուցը,
նրա մորիցը շնորհակալ էլավ, դրադ քաշվեց:

— Հմի ա'սա տենանք,— հարցրեց թոռչին,— էս ի՞նչ բաս ա,
քեզ ո՞վ բերեց քցեց ծովը:

— Բա շե՞ս ասի,— ասեց էդ կնիկը,— ըսե՞նց, ըսե՞նց, ըսե՞նց
բան:

Նո՞ր նստեց ըստե մին-մին նաղլ արեց նրանց իրա գլխով
անցկացածը, ոնց որ ես ձեզ նաղլ արի:

— Ինձ շե՞ս առնի,— հարցրեց թոռչին,— զաթի ես էլ ազապ,
մարդ ու կնիկ ընենք, ըստե իրար հեննա ապրենք:

— Զէ՞,— ասեց էդ կնիկը,— ես մարդ ունեմ, իմ հալալը ո՞նց
հարամեմ: Ուզում ես,— ասեց,— ա'րի քիր ու աղպեր ըլնենք:

— Ըլնե՞նք,— ասեց թոռչին,— թող քու ասածն ըլնի:

Ըսօրվանից դենը թոռչին քանի էթում էր ձկան, ասսու հրա-
մանով, ամեն թոռի անհեսար ակն ու մարգարիտ էր հանում ծո-
վիցը. համա խեղճը շէր իմանում ըտոնք թանգ բաներ ա, որ տանի
ծախի, բոլ փող կտան, Ըսենց էնքամ ակն ու մարգարիտ հանեց
ծովիցը; որ տանը էլ գնելու տեղ լկար՝ էնքամ շատ էր:

Օրեն մի օրը միտք արեց, ասեց՝ արի մի քանի հատ տանեմ
քաղաք, շանց տամ, տեսնամ կա՞ռնեն: Քաղաք հասավ թե չէ, գնաց
մի զարգյարի դուքան, ակն ու մարգարտները հանեց, շանց տվեց:

— Հատին հիսում մանեթ տա՞մ,— ասեց զարգյարը:

Թոռչին ծիծաղաց, հենց իմացավ տնազ ա անում:

— Դե՛ լավ, հարիր մանեթ տամ,— վրա բերեց զարգյարը:

Թոռչին էլի ծիծաղաց: Մախլաս՝ գլխներդ ինչ ցավացնեմ,
զարգյարը ինչ զին ասում էր, թոռչին ծիծաղում էր: Էնքամ արեց,
որ հատը հինգ հարիր մանեթով ծախեց:

— Ա՛յ ուստա,— ասեց թոռչին,— սրանցից որ էլ բերեմ
կա՞ռնես:

— Կառնեմ, խի՛ շեմ առնի,— ասեց զարգյարը:

— Բա՛ս որ ըտենց ա,— ասեց,— կրերեմ:

Թոռչին ուրախ-ուրախ փողերը դրեց շեքը, եղ դառավ, էկավ

տուն։ Էկավ մի աղլովս լիքը լցրեց էն ակն ու մարգարտներից, թաղադան վե կացավ էկավ քաղաք. գնաց դուզ էն զարգյարի դուքանը։

— Բար' աշողում, ո'ւստա, — ասեց թոռչին։

— Ա'յ բարով, հազա՞ր բարին, խերին, թո՛ոչի աղպեր, ամեն ճամփեդ սալամաթ. ո՞նց ես, լա՞վ ես։

— Հրես բերել եմ, ո'ւստա, տես կհավա՞նես։

Ասեց ու աղլխով լիքը մարգարտները դրեց աղաքը։ Զարգյարը աշուկնը բաց արեց, համբրեց, հատը հինգ հարիր մանեթով վե կալավ, հանեց փողը նաղդ տվեց, ձեռիցն առավ. Դե՛, թոռչին էսքամ փո՞ղ. ուրախությունիցը քիչ էր մնացե գժվեր։

— Ի՞նչ առնեմ, ի՞նչ շառնեմ ըստիան տանեմ, որ լավ ըլնի, — ասեց թոռչին։

Միտք արեց, միտք արեց, ասեց. — Արի բոլ ցորեն առնեմ, տանեմ լցնեմ ամբարները, մի քանի տարվա պաշար հազրեմ, որ մըն էլ վե չկենամ գամ ըստե ցորնի։

Ինչքամ փող ուներ ձեռին, բիրագի տվեց ցորնի։ Առավ, լըցրեց զվալները, բերանները զայիմ կապեց, բրեհարներ բռնեց, որ տանեն. Քրեհարները տարան հասցրին ծովի զրաղը. Թոռչին բերեց իրանց ամբարները քոմմա լցրեց. հա՛ կե, թե պտի հատնի։

Անցկացավ մի քանի վախտ, էդ Հալալը շհարամող կնկա երկիրը սովլ ընկավ. Սո՞վ եմ ասում; էնթավո՞ւր սովլ, որ աստոծ փրկի, ազատի, իմ միս կտրողին ուստ լգա. հերը որդուն էր ուտում, աղպերը՝ աղպորը, բարեկամը՝ բարեկամին. մախլասի՛ ո՞վ ո՞մ ձեռն ընկներ, նրան էլ պրծնում շկար, սաղ-սաղ պտի ուտեր, կշտանար, զրաղին կաններ՝ ընե՞նց մի զուկում սովլ էր Թոռչու ի՞նչ վեջն էր, թե աշխարքը սովլ ա ընկե. ամբարները լիքը, թեկուզ տասը տարի էլ ուտեին շէր հատնի։

Էդ սովլ ընկած երկրի մարդիքը իմացան, որ էդ թոռչու ամբարները լիքը ցորեն ա, ամեն դհից վեր ին կենում, գալի սրա կուշտը. սա էլ քոմմքին տալիս էր, ճամփու գնում։ Մի օր էլ էդ Հալալը շհարամող կնկա մարդը ու էրկու բեզրգյան էկան ցորնի. էդ էն էրկու բեզրգյանն ին, որ իրանց բարվանովը անցկենալիս՝ էդ կնկանը ուստ էկան, ուզեցան վրեն պսակվի, նա զարուշէլավ, ասեց. «Ես իմ հալալը շեմ հարամի». նրանք էլ բերին էն օդիեքը հաղացին սրա գլուխը։

Էղ կնիկը սրանց տեսալու բաշտան ճանանչեց, համա լիս չընկավ, ասեց.—Տեսամ սրա վերջն ի՞նչ ա ըլնում:

Նրանք հո, որ ասես, չճանանչեցին: Ախար ո՞րդիան որդեւում մտքովը կանցկենար, թե էղ կնիկը սաղ կմնա, մի օր նրա էրեսը սրանց էրեսին կառնի:

Էղ Հալալը շհարամող կնիկը մի օր բերեց զոնաղլը սարքեց, իրա մարդին ու էղ էրկու բեղրգյանին կանչեց իրա կուշտը զոնաղը: Նրանք էլ վե կացան էկան: Էղ կնիկը նրանց ընենց մի քե՞ֆ շանց տվեց, ընենց մի ուրախություն շանց տվեց, որ էլ շեմ կարա ասին: Քոմմքով էլ որ լուկ ու կուլ հարրեցին, էղ կնիկը վե կալավ թե.— Է՛կիք,— ասեց,— ամեն մարդ իրա գլխով անցկացածը նաղլ անի, անկաջ անենք:

— Լա՛վ,— ասեցին էն էրկու բեղրգյանը ու էղ կնկա մարդը, — է՛կիք:

Էղ կնիկը աղաք մի բեղրգյանին հարցրեց:

— Բեղրգյա'նը սաղ ըլնի, — ասեց, — դե՛ նաղլ արա տենանք ի՞նչ ա անցկացե թու գլխովը:

— Սրանից մի քանի տարի աղաք, — ասեց էղ մի բեղրգյանը, — նոքարներիս հենա ճամփա ի էթում: էկանք, էկանք, մի աղրի կշտի մութը գետինը կոխեց: Վեր էկանք ըտե, շադիր տվինք, կացանք. վարավուրդ արինք, տեհանք էղ աղրի կողքին հրենիկ մի կնիկ սրպանած, վե քցած: Բերինք էղ աղրի շրիցը շաղ տվինք կնկա վրեն, ալրիալը սաղացավ, ընդե կաննեց: Ուզեցա հեննեն պսակվի, զարու չէլավ, ասեց. «Ես մարդ ունեմ, իմ հալալը շեմ հարամիս: Ես էլ, սրտիս հերսիցը, հրամայեցի նոքարներիս մի քառասուն գաղանոց ֆոր փորեն, էղ կնկանը քցեն մեջը, մի քար էլ զնեն ֆորի բերնին: Եննա շատ էլ փոշմանեցի, համա էլ ո՛ւր, քանը բանից անց էր կացե: Հրես էս ա իմ գլխով անցկացածը, որ ընշանք օրս սրտիս միջին դարտ ա դառե, գշեր, ցերեկ ինձ էրում ա:

Եննա մեկել բեղրգյանին հարցրեց:

— Բեղրգյա'նը սաղ ըլնի, — ասեց էղ կնիկը, — Հմի դորը քունն ա, ասա տենանք քո՞ւ գլխովը ի՞նչ ա անց կացե, քո՞ւ դարտն ի՞նչ ա:

— Իմ դարտը նրանից շատ ա, — ասեց մեկել բեղրգյանը: — Ես էլ հենց էղ կնկանը ուսատ էկա, ֆորիցը հանեցի: «Ինձ չե՞»

առնի», — հարցրի. «Չէ», — ասեց, — չեմ առնի. ես մարդ ունեմ, իմ հալալը չեմ հարամի: Ես էլ հերսոտեցի էդ կնկա վրեն. նոքարներիս հրամայեցի դրա ձեռ ու ոտը կապեն, դնեն մի ղութեփ մեջ, տանեն քցեն ծովը: Խեղճ կնիկ, ո՞վ զիտա հմի ծովի ձկների փայ ա էլե, պրծե: Եննա ես էլ փոշմանեցի, գլխիս վա՝ տվի, համա էլ ո՛ւր, բանը բանից անց էր կացե:

Դորը գալիս ա իրա մարդին: Վերջը նրան ա հարցնում:

Նա էլ թե. — Չունքի դուք էրկոսվ էլ ձեր մեղքը շնչներդ ապաք, ես էլ իմ մեղքն եմ շլինքս առնում: Էն կնիկը որ կար՝ իմ հալալ, թագն ու պսակ կնիկն էր. ե՛ս նրան խաբլությունով տարա գեղիցը դուս, ընդե սըպանեցի, հենց իմացա իրա: Հալալը հարամել ա՛ ինչ ասեմ, ես բիրազնիցդ էլ մեղավոր եմ:

— Պրծա՞ք, — հարցրեց էդ կնիկը:

— Հա՛, պրծանք, — ասեցին:

— Դե՛ հմի դորն իմն ա, — ձեն տվեց ընդիան կնիկը: — Էդ շալալը շհարամող կնիկը ես եմ, որ կամ: Աստոծ ինձ ամեն փորձանքից ազատեց, սաղ-սալամաթ էս ծովի դրազը հասցրեց, որ մի օր իմ դրստությունը էրևա, թե ես Հալալը նարամող կնիկ չեմ:

Էս որ լսեցին, իրեքով էլ մնացին էշ կտրած, իրար էրեսի մտիկ անելոն: Ամոթու պապանձվել ին, մնացե. Մին կարում մի խոսք էլա ասի: Էն սհաթը իրեքով էլ էկան, ընկան էդ կնկա ուները, մեղա էկան: Նա իրեքին էլ բաշխեց:

Սրանք մի քանի օր էլ կացան ըտե. նո՞ր ճամփի թաղարեք տեհան, էդ թոռչու ու նրա մոր հեննա մնաս բարով արին, շորսով վե կացան ընկան ճամփա դպա իրանց երկիրը:

Ասսանից իրեք խնձոր վեր ընկավ. մինն՝ ասողին, մինն՝ ասիլ տվողին, մինն էլ՝ անկազ դնողին:

